ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## 02.12.2014Թ. ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 137*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի N 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

***Հաստատել Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 02-ի N 11 հերթական նիստի օրակարգը.***

*1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N137-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին*
*2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետին կից քաղաքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի գործունեության կարգը սահմանելու և հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին*
*3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին*
*4.Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության N11 նախադպրոցական ուսումնական հաստատության /ՀՈԱԿ/ տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին*
*5.Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության Արամ Խաչատրյանի անվան N1 երաժշտական դպրոցի /ՀՈԱԿ/ տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին*
*6.Հրազդան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 147-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*
*7.Գումարը հետ վերադարձնելու մասին*
*8.Հրազդան քաղաքի 2015 թվականի բյուջեն կազմելու ծախսերի նորմատիվներ հաստատելու մասին*
*9.Վարձավճարները զիջելու մասին*
*10.Դրամական օգնություն ցուցաբերելու մասին*
*11.Հրազդանի քաղաքապետարանի սեփականություն համարվող գույքն անվարձահատույց օգտագործման տրամադրելու մասին*
*12.Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 29-ի N 120 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*

*13.Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին*
*14.Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու մասին*
*15.Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վարձակալության պայմանագրերը վերակնքելու և վարձակալությամբ օգտագործման տրամադրված հողամասերի տարեկան վարձավճարի չափի փոփոխման մասին*
*16.Հողամասերի փոփոխություն կատարելու մասին*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ
13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 138-Ն*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 16-րդ հոդվածների.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Հրազդան քաղաքի նորընտիր ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N137-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*Հավելված*
*Հրազդան քաղաքի ավագանու*
*2014 թվականի դեկտեմբերի 2-ի*
*թիվ 138-Ն որոշման*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔ

# ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2014 թվական

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Քաղաքի ավագանին ներկայացուցչական մարմին է և քաղաքի բնակչության բարեկեցության, բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանություն, օրենքի շրջանակներում ապահովում քաղաքային խնդիրների լուծումը և տնօրինում քաղաքի սեփականությունը:
Քաղաքի ավագանին կազմված է 15 անդամներից, գործում է Սահմանադրության հրապարակ 1 հասցեում:

1. Նպատակը

1. Սույն կանոնակարգն ընդունված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա:
2. Սույն կանոնակարգը նպատակաուղղված է Հրազդան քաղաքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը, ինչպես նաև նրանց փոխգործակցությանը քաղաքապետարանի աշխատակազմի հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում:
3. Սույն կանոնակարգը կարգավորում է ավագանու նիստերի անցկացման վայրը, կարգը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման ու հրապարակման կարգը:

**2.Քաղաքի ավագանու գործունեության կազմակերպումը**

1. Քաղաքի ավագանին գործում է սույն կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, ինչպես նաև իր ստեղծած մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:
2. Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Կարող են անցկացվել նաև արտահերթ նիստեր:
3. Քաղաքապետը քաղաքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քաղաքի ավագանու՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված կարգով գործունեությունն իրականացնելու համար:
4. Քաղաքի ավագանու գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:
5. Քաղաքի ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է:

# 2. ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԸ

**3. Նորընտիր ավագանու առաջին նիստը**

1. Առաջին նիստի բացման առթիվ ողջույնի ելույթով հանդես է գալիս քաղաքապետը կամ պաշտոնակատարը, որը և վարում է նիստը:
2. Նիստը վարողը ներկայացնում է ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անուն ազգանունը, մասնագիտությունը և կուսակցական պատկանելիությունը:
3. Ավագանու անդամը, հանդիսավոր պայմաններում, նորընտիր ավագանու առաջին նիստի ժամանակ երդվում է. "Ես՝__---------------------------_____________ , ստանձնելով ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները, երդվում եմ իմ ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքով, անշեղորեն պահպանել ՀՀ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, գործել ի նպաստ քաղաքի զարգացման ու բարօրության:
4. Երդումը տրվում է անհատական կարգով, տեքստի ընթերցմամբ:

5. Ավագանու անդամը ստորագրում է իր ընթերցած տեքստը:

**4.Նիստի օրակարգի քննարկման կարգը**

1. Քաղաքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են քաղաքապետը և ավագանու անդամները՝ աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:
Քաղաքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև քաղաքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան չորս տոկոսը/ մինչև 1000 բնակիչ, երկու տոկոսը 1000-10000 բնակիչ/:
2. Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին:
3. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ
4. Ավագանու նիստի ժամանակ օրակարգում ներառված հարցերի հերթականությունը կարող է փոխվել ավագանու որոշմամբ:
5. Օրակարգում ընդգրկված որոշման նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին-առանձին:

**5.Քաղաքի ավագանու նիստերի գումարման կարգը**

1. Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ քաղաքապետի կամ ավագանու անդամի առաջարկով:
2. Ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստերի քննարկմանը:

**6.Քաղաքի ավագանու արտահերթ նիստը**

1. Արտահերթ նիստ հրավիրելու մասին ավագանու անդամներին տեղյակ է պահվում քաղաքապետի աշխատակազմի միջոցով:
2. Ավագանու արտահերթ նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:
3. Արտահերթ նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ:
4. Արտահերթ և հերթական նիստերում քննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են համանման պահանջներ:

7. Նիստերի իրավազորությունը

1. Ավագանու նիստը սկսվելուց առաջ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը անց է կացնում նիստին ներկայացած և քվեարկություններին մասնակցած ավագանու անդամների գրանցում:
2. Գրանցումներն արվում են հատուկ մատյանում, որտեղ նշվում է նաև նիստից ավագանու անդամի բացակայելու պատճառը:
3. Քաղաքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:
4. Նիստի իրավազորությունը վավերացվում է նաև նիստի ընդհատումներից կամ ընդմիջումներից հետո:

8. Դռնբաց և դռնփակ նիստերը

1. Քաղաքի ավագանու նիստերը դռնբաց են: Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում են քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցները:
2. Քաղաքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի:
3.Ավագանու որոշումներն ու ուղերձները կարող են հրապարակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլում, հասարակական վայրերում կամ այլ ձևով՝ բնակչությանն այն մատչելի դարձնելու համար:
4. Առանձին դեպքերում դռնփակ նիստի առաջարկով կարող է հանդես գալ քաղաքապետը կամ ավագանու անդամը: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ:
5. Դռնփակ նիստում, բացի ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից իրավունք ունեն ներկա գտնվել միայն ավագանու որոշմամբ հրավիրված անձինք:
6. Դռնփակ նիստում ընդունված որոշումները հրատարակվում են:

9. Ավագանու նիստի վարման կարգը

Քաղաքի ավագանու նիստը հրավիրում և վարում է քաղաքապետը կամ պաշտոնակատարը. նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

Նիստը վարողը՝
ա) բացում, ընդհատում և փակում է նիստը,
բ) ձայն է տալիս ելույթ ունեցողներին,
գ) կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրանց արդյունքների հրապարակումը,
դ) կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով:

10. Ավագանու նիստերի արձանագրումը

1.Քաղաքի ավագանու նիստի արձանագրությունն իրականացնում է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
2. Նիստերի արձանագրությունները պահպանվում են քաղաքի նստավայրում:
3.Նիստերի ավարտից հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները վավերացվում են նիստին ներկա ավագանու անդամների կողմից:

11. Բնակչության մասնակցությունը

1. Բնակչությունը իրավունք ունի մասնակցելու քաղաքի ավագանու նիստերին: Քաղաքապետը պարտավոր է ապահովելու անհրաժեշտ աշխատանքային պայմաններ բնակչության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրատվամիջոցների մասնակցության համար: Ցանկացած անհատ կամ խումբ, ով ցանկանում է դիմել ավագանուն հերթական նիստի ժամանակ օրակարգային հարցերի վերաբերյալ, պետք է իր հարցադրումը գրավոր ներկայացնի աշխատակազմի քարտուղարին նախքան նիստի սկսելը: Սակայն, ավագանին ինքն է որոշում նիստի ժամանակ անհատին կամ խմբին լսելու հարցը:
2. Բնակչության հարցադրումները և առաջարկությունները օրակարգային ցանկացած հարցի վերաբերյալ թույլատրվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեկ երրորդով: Ավագանու հերթական նիստերի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝ քաղաքացիների կողմից ավագանուն ուղղված ցանկացած հարցադրմանը, որը վերաբերում է քաղաքին, պատասխանելու համար:

3. Հարցադրումների և առաջարկությունների հեղինակը ներկայանում է՝ նշելով իր անունն ու ազգանունը: Քաղաքապետը հերթականությամբ խոսք է տրամադրում ելույթ ունենալ ցանկացողներին:

4. Հարցադրումների և առաջարկությունների հիման վրա ավագանին նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ կարող է դիմել հանձնաժողովներին կամ քաղաքապետարանի աշխատակազմին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու հարցի դիտարկման համար:

5.Բնակիչները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները պարտավոր են զբաղեցնել իրենց համար նախատեսված տեղերը և հետևել սույն կանոնակարգի 9-րդ կետով հաստատված ավագնու նիստի վարման կարգին:

6.Քաղաքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև քաղաքում հաշվառված, 16 տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը՝ տասը հազարից ավել բնակիչ ունեցող քաղաքներում: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են քաղաքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայանում են քաղաքապետին: Քաղաքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան քաղաքապետի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և սույն հոդվածով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում դրա հերթական /նաև առաջին/ քննարկումից առնվազն վեց ամիս հետո: Քաղաքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող, բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

7.Քաղաքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում քաղաքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար քաղաքապետի առաջարկությամբ և քաղաքի ավագանու որոշմամբ ձևավորվում է քաղաքապետին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և քաղաքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև քաղաքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): Քաղաքապետը մինչև քաղաքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը քաղաքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ քաղաքապետը տրամադրում է տեղեկատվություն քաղաքի ավագանուն:
Խորհրդակցական մարմնի գործունեության կարգը, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը սահմանում է քաղաքի ավագանին:

## 3.ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Քաղաքի ավագանու նիստում հարցերի քննարկման կարգը

1. Հարցերի քննարկումը սկսվում է նիստի օրակարգի հաստատումից հետո:

Օրակարգային հարցի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝
ա) հիմնական զեկուցողի ելույթը.
բ) հարցեր զեկուցողին.
գ) հարակից զեկուցողի ելույթը.
դ) հարցեր հարակից զեկուցողին
ե) մտքերի փոխանակություն.
զ) եզրափակիչ ելույթներ.
է) քվեարկություն:
2. Որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս տվյալ հարցի հեղինակը, իսկ քաղաքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը, իսկ որպես հարակից զեկուցող՝ հանձնաժողովի ներկայացուցիչը:
3. Եթե հարցի քննարկումը ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից այն ընդմիջվել էր:
4. Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝
ա) զեկուցման համար՝ մինչև 10 րոպե
բ) հարցերի համար՝ մինչև 3 րոպե
գ) ելույթների համար՝ մինչև 5 ական րոպե
դ) եզրափակիչ ելույթի համար մինչև 5 ական րոպե
5. Քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Զեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մտքերի փոխանակության ժամանակ արված մյուս առաջարկությունները: Այդ առաջարկությունների քվեարկման հաջորդականությունը որոշում է քաղաքապետը:

13. Հարցեր տալու կարգը

1. Հարցեր տալու համար ավագանու անդամների հերթագրումը իրականացնում է նիստը վարողը:
2.Հարցերը տրվում են ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ:
3. Եթե հարց տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:
4. Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցեր չեն տրվում:

14. Մտքերի փոխանակության կարգը

1. Մտքերի փոխանակության ժամանակ ավագանու յուրաքանչյուր անդամին ելույթ ունենալու հնարավորություն է տրվում:
2. Ավագանու անդամը կարող է նույն հարցի շուրջ երկրորդ անգամ ելույթ ունենալ միայն այն դեպքում, եթե ելույթով հանդես են եկել մյուս բոլոր ցանկություն ունեցողները:
3. Մտքերի փոխանակությանը, բացի ավագանու անդամներից և քաղաքապետից, այլ անձինք կարող են մասնակցել միայն ավագանու համաձայնությամբ:
4. Ավագանու անդամները ելույթ ունենալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ քաղաքապետին նախապես գրավոր իրազեկման միջոցով:
5. Ելույթ ունեցողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ:
6. Քաղաքապետը դադարեցնում է քաղաքի ավագանու ելույթը, եթե վերջինս գերազանցում է իրեն հատկացված ժամանակը նախազգուշացումից հետո:

**15. Որոշումների ընդունումը**

1. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքով և սույն կանոնակարգով:
2. Ավագանու քվեարկությանը կարող են դրվել միայն սույն կանոնակարգով սահմանված կարգով ավագանու անդամներին բաժանված և քննարկված նախագծերը:
3. Քաղաքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:
4. Քաղաքի ավագանու որոշումը կնքում է քաղաքապետը:

**16. Քվեարկության անցկացման կարգը**

1.Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող առաջարկությունները, ճշտում է դրանց ձևակերպումները և հիշեցնում է նաև, թե ձայների ինչ քանակով է ընդունվում որոշումը:
2. Քվեարկությունը իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ: Ձայները հաշվում է քաղաքապետի աշխատակազմի քարտուղարը:
3. Ավագանու անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ:
4.Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները:

## 4. ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ

**17. Քաղաքի ավագանու անդամների իրավունքները**

Քաղաքի ավագանու անդամն իրավունք ունի՝
1.հարցեր ուղղել քաղաքապետին և ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան ավագանու հաջորդ հերթական նիստի ժամանակ, եթե ավագանին այլ որոշում չի ընդունում.
2. հնարավորության դեպքում մասնակցել ավագանու վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև փորձի փոխանակման այցերին:

**18. Քաղաքի ավագանու անդամի պարտականությունները**

Քաղաքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և քաղաքի բարօրությանն ուղղված համոզմունքով:
Քաղաքի ավագանու անդամը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1. մասնակցել ավագանու այն հանձնաժողովների նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է.
2. նախապես ծանոթանալ իրեն փոխանցվող քննարկման ենթակա նյութերին.
3. ծանոթանալ քաղաքացիներից ստացված դիմումներին և օրենքով սահմանված կարգով պատասխանել դրանց.
4. իրազեկ լինել տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենսդրությանը.
5. հետևել քաղաքի ավագանու և քաղաքապետի աշխատակազմի գործունեությանը վերաբերող նյութերի լուսաբանմանը տեղական զանգվածային լրատվամիջոցներում.
6. առաջնորդվել քաղաքի ավագանու հաստատված կանոնակարգով:

**19. Քաղաքի ավագանու նիստերից անհարգելի բացակայելու դեպքում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը**

1. Ավագանու անդամների մասնակցությունը նիստերին ու քվեարկություններին հաշվառում է քաղաքապետի աշխատակազմի քարտուղարը:
2. Աշխատակազմի քարտուղարը եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք է տալիս նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին:
3. Նիստերից ու քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին ավագանու անդամը տեղեկացնում է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարը ավագանու նիստի ժամանակ հրապարակում է ավագանու անդամի բացակայության պատճառը, որը և արձանագրվում է:
4. Ավագանու անդամը նիստերից կամ քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին աշխատակազմի քարտուղարին, սույն կանոնակարգով սահմանված կարգով, չտեղեկացնելու դեպքում բացակայությունը համարվում է անհարգելի և արձանագրվում է համապատասխանաբար: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատակազմի քարտուղարին ներկայացվում է անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք բժշկից:
5. Աշխատակազմի քարտուղարի կողմից տարվող հաշվառման հիման վրա, քաղաքապետը կամ ավագանու անդամը հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում ավագանու որոշման նախագիծը՝ մեկ տարվա ընթացքում նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին: Որոշման նախագծին կցվում է նիստերից կամ քվեարկություններից ավագանու անդամի բացակայության արձանագրված պատճառները:
6. Ավագանու անդամն առնվազն 7 օր առաջ գրավոր տեղեկացվում է ավագանու նիստում իր բացակայությունների հարցի քննարկման մասին: Ավագանու անդամի բացակայության դեպքում, հարցի քննարկումը հետաձգվում է մինչև հաջորդ հերթական կամ արտահերթ նիստը, որտեղ այն քննարկվում է անկախ նրա ներկայությունից:
7. Յուրաքանչյուր ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը քննարկվում է առանձին՝ սույն կանոնակարգի 3.1-րդ հոդվածով սահմանված կարգով: Քննարկման ընթացքում ավագանու անդամը կարող է ելույթ ունենալ, պատասխանել հարցերին, հանդես գալ 5 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:
8. Նիստերի կամ քվեարկությունների կեսից ավելիին ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին քաղաքի ավագանու որոշումն ընդունվում է նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

**20. Շահերի բախումը**

1. Ավագանու անդամը չի կարող մասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:
2. Եթե առկա է վերը նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա քաղաքի ավագանին տեղեկացվում է դրա մասին նախքան տվյալ հարցի քննարկման և քվեարկությանը սկսելը:
3. Եթե շահերի բախման առկայության դեպքում ի հայտ են գալիս վիճահարույց հանգամանքներ, ապա քաղաքի ավագանին հետաձգում է որոշման կայացումը՝ լրացուցիչ պարզաբանումներ կատարելու նպատակով:

**21. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին քաղաքի պատվավոր քաղաքացի կոչում շնորհելու(զրկելու) կարգը**

Քաղաքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով:
Քաղաքի պատվավոր քաղաքացու կոչումը շնորհվում է հետևյալ կարգով՝

1.Քաղաքի պատվավոր քաղաքացու կոչմանը արժանանում են, անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային կամ այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են քաղաքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն քաղաքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, բացառիկ ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:
2. Քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) առաջարկը ավագանու հաստատմանն է ներկայացնում քաղաքապետը: Քաղաքապետին նման առաջարկով կարող են դիմել ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունները:
3. Առաջարկ ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել քաղաքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:
4. Ստացված առաջարկությունները քննարկում է քաղաքի ավագանին, և նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:
5. Քաղաքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական:
6. Քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) մասին քաղաքի ավագանու որոշումը հրապարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է տեղական զանգվածային լրատվության միջոցներով:

## 5. ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

### 22. Հանձնաժողովները և դրանց գործունեությունը

1. Քաղաքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:
2. Հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ քաղաքի ավագանու եզրակացություններ տալու նպատակով:
3. Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է քաղաքի ավագանու որոշմամբ:

### 23. Մշտական հանձնաժողովները և նրանց գործունեությունը

1. Մշտական հանձնաժողովները կարող են լինել՝
ա) գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.
բ) սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով.
գ) իրավական հարցերի մշտական հանձնաժողով.
դ) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.
ե) ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.
1. Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում հանձնաժողովները կարող են աշխատանքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատուների, որոնք իրենց մատուցած ծառայությունների դիմաց կարող են վարձատրվել քաղաքի բյուջեից:

### 24. Ժամանակավոր հանձնաժողովը և նրա գործունեությունը

1. Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին որոշման նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

2. Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, գործունեության ժամկետը և աշխատակարգը:

3. Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է ավագանու նիստում:

## 25. Հանձնաժողովի աշխատանքների համակարգումը

1. Մշտական հանձնաժողովի աշխատանքները համակարգվում են իր կողմից ընդունված աշխատակարգի միջոցով: Հանձնաժողովի կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ, եթե աշխատակարգով այլ բան նախատեսված չէ:

2. Հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատվում է հանձնաժողովի նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

3. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե դադարել են նրա որպես ավագանու անդամի լիազորությունները:

4. Հանձնաժողովի նախագահը՝

ա) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

բ) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.

գ) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

դ) ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունները և առաջարկությունները ուսումնասիրվող հարցի վերաբերյալ:

ե) ընթացք է տալիս և պատասխանում է հանձնաժողովին ուղղված դիմումներին:

5. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում են համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

## 26. Հանձնաժողովների նիստերի հրավիրման կարգը

1. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում քաղաքի ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

2. Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում, համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

3. Ժամանակավոր հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետներում:

## 27. Հանձնաժովների նիստերի անցկացման կարգը

1. Հանձնաժողովի նիստում կարող են ներկա գտնվել ավագանու անդամները, քաղաքապետը և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:

2. Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

## 28. Հանձնաժողովի նիստում քննարկումների կազմակերպման և որոշումների ընդունման կարգը

1. Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա) հիմնական զեկուցողի ելույթը.

բ) հարցեր հիմնական զեկուցողին.

գ) հարակից զեկուցողի ելույթը (եթե այդպիսիք կան).
դ) հարցեր հարակից զեկուցողին.
ե) մտքերի փոխանակություն.
զ) հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթը.
2. Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից հետո:
3. Նիստում քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:
4. Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:
5. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:
6. Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

## 6. ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵՆ

### 30. Բյուջեի նախագծի քննարկման կարգը

1. Քաղաքի բյուջեի նախագիծը քաղաքի ավագանուն է ներկայացնում քաղաքապետը: Բյուջեի նախագիծը ներկայացնելուց հետո հանդես են գալիս՝
ա) համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.
բ) ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:
2. Քաղաքի ավագանու անդամները քաղաքապետին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն կանոնակարգի 3-րդ գլխի 12-րդ բաժնով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն սույն կանոնակարգով սահմանված կարգով:

### 31. Քաղաքի բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման և քննարկման ժամկետները

1. Քաղաքապետը, եռամսյակը մեկ անգամ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում քաղաքի ավագանուն:
2. Քաղաքապետը քաղաքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը քաղաքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:
3. Քաղաքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

### 32. Քաղաքի բյուջեի կատարման հաշվետվությունը, բովանդակությունը և քննարկման կարգը

1. Քաղաքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է՝
ա) տեղեկություններ հաշվետու տարում քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև.
բ) տեղեկություններ հաշվետու տարում քաղաքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով.

գ) տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.

դ) այլ տեղեկություններ, որոնք քաղաքապետն անհրաժեշտ է համարում քաղաքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

2. Քաղաքի ավագանու նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է քաղաքապետը: Զեկուցումներով կարող են հանդես գալ՝

ա) համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

բ) ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

3. Քաղաքի ավագանու անդամները քաղաքապետներին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն կարգի 3-րդ գլխի 12-րդ կետով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

4. Մտքերի փոխանակության ավարտից հետո քվեարկության է դրվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ավագանու որոշման նախագիծը:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 33. Կանոնակարգի փոփոխությունները

1. Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել քաղաքի ավագանու որոշմամբ: Ցանկացած կանոնակարգային փոփոխություն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին:

2. Փոփոխությունների ընդունումը պահանջում է ավագանու նիստին ներկա անդամների ձայների ավելի քան երկու երրորդը:

### 34. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 139*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Սահմանել խորհրդակցական մարմնի գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ
Հրազդան քաղաքի ավագանու
2014 թ. դեկտեմբերի 2-ի
թիվ 139 որոշման

**ԿԱՐԳ**

«Քաղաքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին» խորհրդակցական մարմնի գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետին կից, քաղաքի տարածքում հասարակական կարգով գործող «Քաղաքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին>> խորհրդակցական մարմնի /այսուհետ՝ խորհրդակցական մարմին/ գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը:
2. Խորհրդակցական մարմինը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որը արձանագրվում է:
3. Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
4. Հանրային լսումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է:
5. Քաղաքապետարանի ինտերնետային կայքում հրապարակվում է Հանրային լսումների հրավեր, որը պարունակում է լսումների վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ:

Հրավերը հրապարակվում է նաև զանգվածային այլ լրատվամիջոցներով, ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով և փակցվում է քաղաքի ավագանու նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են քաղաքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար::

6. Հանրային լսումների հրավեր հրապարակելու հետ մեկտեղ ինտերնետային կայքում հրապարակվում է իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև այլ նյութեր:
7. Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել ինտերնետային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել

աշխատակազմին: Եթե առաջարկությունները և դիտողություններն ուղարկվել են էլեկտրոնային հասցեով, ապա աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան դիտողությունները և առաջարկություններն ստանալու մասին:

8. Հանրային լսումների հրավերը հրապարակելուց առնվազն տասներկու օր հետո իրականացվում է նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ բաց լսումներ:

Աշխատակազմի ներկայացուցիչը նախապես նշանակված ժամին բացում է լսումները, ներկայացնում է համապատասխան նախագծի համառոտ նկարագիրը, քննարկման հարցերի շրջանակը, աշխատակազմի ներկայացուցիչ հանդիսացող հանրային լսումների քարտուղարին, ինչպես նաև մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութեր քննարկումների վերաբերյալ, որոնք մինչ այդ հրապարակված չէին եղել ինտերնետային կայքում:

9. Հանրային լսումների քարտուղարը կազմում է լսումների վերաբերյալ գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է վերջինիս կողմից:

Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն լսումներն իրականացնող մարմնի անվանումը, լսումների ամսաթիվը, թեման, մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

10. Հանրային լսումների արդյունքում քննարկման դրված հարցերի առնչությամբ ստացված յուրաքանչյուր առաջարկության ու դիտողության վերլուծության, ինչպես նաև դրանց ամփոփման հիման վրա կարող է կատարվել նախագծի անհրաժեշտ լրամշակումներ:

11. Հանրային լսումների ավարտից հետո եռօրյա ժամկետում նախագծի լրամշակված տարբերակը և ստացված ու ընդունված առաջարկություններն ու դիտողությունները տեղադրվում է ինտերնետային կայքում և սահմանված կարգով ընդգրկվում է ավագանու նիստի օրակարգում ու տրամադրվում ավագանու անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 140*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՒԲԻԿ
13. ՓԻԼԻՓՅԱՆ ՍԱՄՎԵԼ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ

Հրազդան քաղաքի ավագանու
2014թ. դեկտեմբերի 2-ի
թիվ 140 որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակիչների (այսուհետև՝ բնակիչներ) մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

2. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես քաղաքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

3. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև սույն կարգով:

## ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4. Տեղական ինքնակառավարմանը քաղաքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:
5. Քաղաքապետարանի աշխատակազմը քաղաքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:
6. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի քաղաքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:
7. Քաղաքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ բնակիչների ոչ պակաս, քան երկու կամ չորս տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց

ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են քաղաքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են քաղաքապետին:

Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանում է ավագանու կանոնակարգով:

8. Քաղաքապետը քաղաքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է ավագանու նիստին՝ ավագանու քննարկմանը:
9. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո:
10. Քաղաքապետը.

ա) քաղաքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու քաղաքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով քաղաքի ինտերնետային կայքը և այլ իրազեկման միջոցներ:

բ)ապահովում է քաղաքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումների մասնակցելու ցանկություն հայտնած քաղաքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար:

գ)կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առընչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես քաղաքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, քաղաքապետարանի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում քաղաքի ավագանու և քաղաքապետի որոշումների, քաղաքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին:

դ)քաղաքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է քաղաքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

11. Քաղաքապետը մինչև քաղաքի զարգացման քառամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը քաղաքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և քննարկումներ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 141*

### *ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ N 11 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ /ՀՈԱԿ/ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Համաձայնություն տալ Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության N11 նախադպրոցական ուսումնական հաստատության /ՀՈԱԿ/ տնօրեն նշանակել Հերիքնազ Սահակյանին:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱԶԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ [illegible]
13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՄԱՐԳՍ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 142*

*ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ /ՀՈԱԿ/ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Համաձայնություն տալ Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության Արամ Խաչատրյանի անվան N 1 երաժշտական դպրոցի /ՀՈԱԿ/ տնօրեն նշանակել Հռիփսիմե Բունիաթյանին:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅ[illegible]
13. ՓԻ[illegible] ԱՄԲՈՍ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 143-Ն*

## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 147-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի «Հրազդան քաղաքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝*

*1.Ծախսային մասում՝*

*1) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի թիվ 1 երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում <<23445.8>> թիվը փոխարինել <<17945.8>> թվով.*

*2) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի թիվ 2 երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում <<27126.1>> թիվը փոխարինել <<22126.1>> թվով.*

*3) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի Երվանդ Քոչարի անվան արվեստի դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում <<23235.3>> թիվը փոխարինել <<19735.3>> թվով.*

*4) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում <<14114.2>> թիվը փոխարինել <<12114.2>> թվով.*

*5) 8 բաժնի 4 խմբի 2 դասի 55 ծրագրի <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> /4819/ հոդվածում <<1300.0>> թիվը փոխարինել <<1800.0>> թվով.*

*6) 10 բաժնի 7 խմբի 1 դասի 54 ծրագրի /4729/ <<Այլ նպաստներ >> հոդվածում <<27155.0>> թիվը փոխարինել <<29655.0>> թվով.*

*7) 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Պարգևատրումներ>> /4112/ հոդվածում <<500.0>> թիվը փոխարինել <<9500.0>> թվով, <<Էներգետիկ ծառայություններ>> /4212/ հոդվածում <<73543.2>> թիվը փոխարինել <<76193.2>> թվով:*

*8) 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի <<Պարգևատրումներ>> /4112/ հոդվածում <<0>> թիվը փոխարինել <<135.0>> թվով, <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> /4239/ հոդվածում <<150.0>> թիվը փոխարինել <<15.0>> թվով,*

*9) 1 բաժնի 6 խմբի 1 դասի 51 ծրագրի Հուղարկավորությունների կազմակերպման, հուշարձանների և գերզմանատների պահպանման, շահագործման համայնքային ոչ առևտրային*

կազմակերպության <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> /4511/ հոդվածում <<11628.4>> թիվը փոխարինել <<11803.4>> թվով:

10) 8 բաժնի 2 խմբի 3 դասի 51 ծրագրի Մշակույթի կենտրոնի <<Պարգևատրումներ>> /4112/ հոդվածում <<0>> թիվը փոխարինել <<175.0>> թվով,

11) 5 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի Աղբահանում և սանիտարական մաքրում հիմնարկի <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> /4111/ հոդվածում <<35826.2>> թիվը փոխարինել <<35651.2>> թվով, <<Պարգևատրումներ>> /4112/ հոդվածում <<0>> թիվը փոխարինել <<175.0>> թվով,

12) 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>>/4511/ հոդվածում <<78940.8>> թիվը փոխարինել <<79940.8>> թվով.

Բյուջեի թիվը և՛ եկամտային , և՛ ծախսային մասում կազմում է 1253097.8 հազար դրամ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱԶԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ
13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 144*

*ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 424 տան բնակչուհի Սեդա Պետրոսյանի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ Կ-619 դիմումը և Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 424 տան բնակիչ Սեդա Պետրոսյանի կողմից, որպես հողի կադաստրային արժեք վճարված 123000 /մեկ հարյուր քսաներեք հազար/ դրամ գումարը 900125001140 հաշվից հետ վերադարձնել գործարքը չկայանալու պատճառով:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱԶԳԵՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԵԼ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ
13. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 145*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի.*

*Հրազդան քաղաքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հաստատել Հրազդան քաղաքի 2015 թվականի բյուջեն կազմելու ծախսերի նորմատիվները՝ համաձայն հավելվածի:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԼ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՍԻԿ
13. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված
Հրազդան քաղաքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 2-ի
թիվ 145 որոշման

# ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ

| Թիվը | Ծախսերի անվանումը | Առաջարկվող նորմատիվները |
|---|---|---|
| 1 | Էլ. Էներգիա | |
| | ա) վարչական շենքի համար | 17000.0 հ.դ |
| | բ) արտադպրոցական հիմնարկների մեկ դասասենյակի համար | 50.0 հ.դ |
| | գ) մանկապարտեզների մեկ երեխայի համար | 6.5 հ.դ |
| | դ) գրադարանների համար | 150.0 հ.դ |
| 2 | Ջրամատակարարում | |
| | ա) վարչական շենքի համար | 300.0 հ.դ |
| | բ) արտադպրոցական հիմնարկների գրադարանների և այլ մշակույթի օբյեկտների մեկ աշխատողի համար (20 լ/օր) | 0.96 հ.դ |
| | գ) մանկապարտեզների մեկ երեխայի համար(50 լ/օր) | 2.4 հ.դ |
| 3 | Ջեռուցում վառելիք | |
| | մեկ վառարանի համար | 40.0 հ.դ |
| 4 | Վառելանյութ և ավտոմեքենաների պահպանում | |
| | ա) ծառայողական մեկ մեքենայի օրական ծախսը.<br>Քաղաքապետ<br>Քաղաքապետի տեղակալ և աշխատակազմի քարտուղար | <br>20լ<br>10 լ |
| | բ) ավտոմեքենայի պահպանման ծախսերի վառելանյութի տարեկան ծախսի նկատմամբ | 50% |
| 5 | Տնտեսական գույք և սարքավորումներ | |
| | ա) արտադպրոցական հիմնարկներ | 25.0 հ.դ |
| | բ) մանկապարտեզների մեկ երեխայի համար տարեկան | 6.93 հ.դ |
| 6 | Այլ կոմունալ ծախսեր(աղբահանություն) | |
| | ա) արտադպրոցական հիմնարկներ (տարեկան անկախ աշխատողների թվից) | 75.0 հ.դ |
| | բ) մանկապարտեզների մեկ երեխայի համար տարեկան | 1.8 հ.դ |
| 7 | Այլ ծախսեր | |
| | ա) արտադպրոցական հիմնարկների համար | 600.0 հ.դ |
| | բ) մանկապարտեզների մեկ երեխայի համար տարեկան | 2.0 հ.դ |
| 8 | Մանկապարտեզի մեկ երեխայի օրական սննդի ծախսը | 0.267 հ.դ |
| | ա) հատկացվում է համայնքի բյուջեից | 25.0% |
| | բ) հատկացվում ծնողական միջոցներով | 75.0% |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 146*

*ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, արվեստի և երաժշտական դպրոցներ հաճախող սոցիալապես անապահով երեխաների վարձավճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 8 արձանագրությունը և Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Զիջել Հրազդանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, արվեստի և երաժշտական դպրոցներ հաճախող ներքոնշյալ երեխաների վարձավճարները 50% և 100%-ի չափով մեկ տարի ժամկետով.*

*1) Ալֆրեդ Համբարձումի Գասպարյան (թիվ 11 մանկապարտեզ-50%)*
*2) Աստղիկ Համբարձումի Գասպարյան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*3)Սվետլանա Համբարձումի Գասպարյան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*4)Արինե Վազգենի Իսայան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*5) Արեն Վազգենի Իսայան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*6) Միեր Վիգենի Սահակյան (թիվ 11 մանկապարտեզ-50%)*
*7) Պարգև Սուրիկի Ֆահրադյան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*8) Հայարփի Սուրիկի Ֆահրադյան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*9)Մարիա Ցոլակի Պողոսյան (թիվ 15 մանկապարտեզ-50%)*
*10)Արաքսյա Արմանի Բաղդասարյան (Եր. Քոչարի անվ արվեստ դպրոց -50%)*
*11) Գարիկ Արմենի Հայրապետյան (թիվ 7 մանկապարտեզ-100%)*
*12) Վահե Ռոբերտի Հովսեփյան (թիվ 7 մանկապարտեզ-100%)*
*13) Թագուհի Արթուրի Հակոբյան (թիվ 16 մանկապարտեզ-50%)*
*14) Գագիկ Վահրամի Խաչատրյան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*15) Վիգեն Վահրամի Խաչատրյան (թիվ 2 երաժշտական դպրոց-50%)*
*16) Մերի Միերի Վարդանյան (Կ. Զարյանի անվան արվեստի դպրոց-50%)*
*17)Մոնիկա Միերի Վարդանյան (Կ. Զարյանի անվան արվեստի դպրոց-50%)*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

6. ԽՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ

7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 147*

### *ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Տալ համաձայնություն, 2014 թվականի սեպտեմբերի 27-ին, Հրազդան գետի հունով Սևանա լճից ջրաքանակ բաց թողնելու պատճառով տուժած, Ջրառատ թաղամասի թվով 15 ափամերձ տնտեսություններին 720 000 (յոթ հարյուր քսան հազար) դրամ օգնություն ցուցաբերելու առաջարկությանը, համաձայն կից հավելվածի:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ
13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված
Հրազդան քաղաքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 2-ի
թիվ 147 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

| հհ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵ | ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ(դրամ) |
|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Համիկ | Ջրառատ 48ա | 100000 |
| 2. | Կնյազյան Գուրգեն | Ջրառատ 43/3 | 60000 |
| 3. | Ստեփանյան Հայրիկ | Ջրառատ 48 | 50000 |
| 4. | Մուրադյան Լուսյա | Ջրառատ 74 | 40000 |
| 5. | Օհանյան Հայկեա | Ջրառատ 230 | 40000 |
| 6. | Ալեքսանյան Ֆրունզիկ | Ջրառատ 55 | 40000 |
| 7. | Ալթունյան Սոնա | Ջրառատ 25 | 50000 |
| 8. | Գևորգյան Ռիփսիկ | Ջրառատ 83/2 | 40000 |
| 9. | Դավթյան Գրետա | Միկրոշրջան 310/35 | 40000 |
| 10. | Հարությունյան Ռուբեն | Ջրառատ 444 | 40000 |
| 11. | Կնյազյան Էլվա | Ջրառատ 52/1 | 40000 |
| 12. | Փիլիփոսյան Համեստ | Ջրառատ 395/2 | 50000 |
| 13. | Կնյազյան Հրայր | Ջրառատ 43/2 | 50000 |
| 14. | Խաչատրյան Սուսաննա | Ջրառատ 73 | 40000 |
| 15. | Մարտիրոսյան Դիմիտրի | Ջրառատ 75 | 40000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 148*

### *ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդանի քաղաքապետարանի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոցի 24 նախադպրոցական հիմնարկի շենքից 1442քմ մակերեսով տարածք և 500քմ մակերեսով բակային հատված անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈԲԵՐՏ
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ [illegible]
13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ [illegible]

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 149*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 120 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 29-ի «Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու մասին» N120 որոշման 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.*

*- Մ.Բաղրամյան թաղամաս Զ.Անդրանիկի պողոտա թիվ 114/2 հասցեում գտնվող 38.5քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի 3-րդ շենքի թիվ 17 բնակարանի բնակիչ Վահե Բաղալյանին և Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի 5-րդ շենքի թիվ 129 բնակարանի բնակիչ Վիգեն Բաղալյանին՝ 74000 /յոթանասունչորս հազար/ դրամ կադաստրային արժեքով /ծածկագիր՝509-002/:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 150*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1. Թույլատրել ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասը՝*
*1)Կենտրոն թաղամաս 79 շենքին հարող տարածք թիվ 4 հողամաս՝ 20.0քմ /ավտոտնակ կառուցելու/՝ 5000 /հինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԻՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 151*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Թույլատրել ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարել Հարավային թաղամաս Ավետիսյան փողոց 117/1 հասցեում գտնվող 300.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ Հրազդան քաղաքի Ավետիսյան փողոցի թիվ 06 տան բնակիչ Վարդան Վերդոյանին՝ 373000 /երեք հարյուր յոթանասուներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով /ծածկագիր՝ 037-006/:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 152*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի,Հրազդան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N120-Ն որոշման,հիմքընդունելով Մարիա Խաչատուրյանի 2014 թվականի նոյեմբերի 18-ի, Գայանե Հայրապետյանի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի դիմումները և քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Թույլատրել վերակնքել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 216 շենքի թիվ 20 բնակարանի բնակչուհի Մարիա Խաչատուրյանի հետ 2004 թվականի հոկտեմբերի 15-ին կնքած 24.05 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը՝ 15 տարի ժամկետով: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 6100 /վեց հազար մեկ հարյուր/ դրամ:*

*2.Թույլատրել վերակնքել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 34 շենքի թիվ 19 բնակարանի բնակչուհի Գայանե Հայրապետյանի հետ 2004 թվականի սեպտեմբերի 29-ին կնքած 26.4 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը՝ 15 տարի ժամկետով: Հողամասի տարեկան վարձաչափը սահմանել 6600 /վեց հազար վեց հարյուր/ դրամ:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

6. ԻՎԱՌՅԱՆ ԱՐԱՅԻԿ

7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ

8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 դեկտեմբերի 2014թվականի N 153*

## *ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով «Կ.Հ.Ա.Ռ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2014 թվականի նոյեմբերի 26-ի գրությունը և քաղաքապետի առաջարկությունը.*

Հրազդան քաղաքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Կատարել Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփ. իրավ. գրանցման վկայական թիվ 2643078 տրված 2009 թվականի հունիսի 17-ին/ և «Կ.Հ.Ա.Ռ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող /սեփ. իրավ. գրանցման վկայական թիվ 2642201 տրված 2009 թվականի հոկտեմբերի 20-ին/ հողամասերի փոփոխություն՝ պահպանելով հողամասերի մակերեսները:*

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
6. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

13. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՍՄԲԱՏ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ